



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 27 ՅՈՒՆԻՎՈՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 14

ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ: Տէրը երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խտրորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան. չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկը: Երբեք խելքի պիտի չգա՞ն բոլոր անոնք, որոնք չարիք կը գործեն. անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրեն, հացի պէս, եւ Տիրոջ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է: Չարագործները աղքատին խորհուրդները կը հեգնեն, բայց Տէրը ինքն է անոր ապաւենը: Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Միտնէն պիտի գայ: Երբ Տէրը ետ դարձնէ գերի փարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնձան եւ ուրախանան:

ՇԱՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոշիւնի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

22 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԸ ՅՈՒՂԱՅԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆ (22:1-17)

Տերը իր պարգամը կու տայ Երեմիա մարգարեին որպեսզի անմիջապես թագաւորին փոխանցէ այդ պարգամը: Տիրոջ պարգամը շար յարակ է. «**Իրաւունք ու արդարութիւն ըրէք: Զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք: Օտարականին, որբին ու որբեւարիին անիրաւութիւն ու բռնութիւն մի ընէք, եւ այսպէղ անմեղ արիւն մի թափէք**» (3 հմբ): Ահա Տիրոջ պարգամն ու խոսքումը: Եթէ այս ըսուածները գործադրեն իրենց համար աղէկ պիտի ըլլայ, իսկ եթէ ոչ՝ աւերակ: Որքան ալ անոնք փորձեն իրենց համար պալատներ շինել եղեւնափայտով, որ լաւագոյն փայտն է, այդ պալատը պիտի կործանի, որովհետեւ այդ պալատին ու թագաւորութեան կանգուն մնալու պայմանն ու գաղտնիքը շինուած փեսակը չէ, այլ անոնց՝ այսինքն՝ թագաւորին ու ժողովուրդին նկարագիրը, որ իրաւունք եւ արդարութիւն ընեն, աղքատին ու փնանկին դատը փեսան, եւ ոչ թէ ազահութեամբ եւ արիւն թափելով, անիրաւութիւն եւ բռնութիւն ընելով զբաղին: Օտար ազգերը որոնք պիտի յարձակին այս ազգին վրայ պիտի զարմանան ըսելով. «**Ինչո՞ւ համար Տերը այս մեծ քաղաքին այսպէս ըրաւ, որովհետեւ իրենց Տէր Աստուծոյն ուխտը թողուցին եւ ուրիշ աստուածներու երկրպագութիւն ըրին ու անոնց ծառայեցին**» (8-9 հմբ): Այս պարգամներուն խորքը ուրիշ բան չէ եթէ ոչ Յուդայի թագաւորը ներկայացուցիչը ըլլալով Աստուծոյ, պէտք է ունենայ նոյն նկարագիրը ինչ որ Աստուծոյ նկարագիրն է: Թագաւոր ըլլալով չի նշանակեր ամէն ինչ ընելու իրաւունքը ունի: Իրենց փրուած իշխանութիւնը այն է նմանիլ Աստուծոյ: Այդ իսկ է ամբողջ նպատակն ու ծրագիրը Աստուծոյ իր ժողովուրդը ունենալով իր թագաւորը նմանելու Աստուծոյ: Այնպէս ինչպէս Աստուած Ինք հոգ կը փանի որբին ու որբեւարիին, զրկուածին, անօգնականին, նոյնպէս ալ իր կողմէ նշանակուած թագաւորին կոչումն ու պարտականութիւնն է հոգ փանիլ այդպիսիներուն, եւ ոչ թէ առաւել եւս զրկել ու անիրաւութիւն ընել ու բռնութեամբ վարուիլ անոնց հետ:

Թէեւ Յուդան Աստուծոյ համար Գաղաադի պէս պարարտ ու բերրի էր, ու Լիբանանի գազաթի պէս բարձր, բայց անապարհի ու անբնակ վայրի պիտի վերածէ Աստուած (6 հմբ): Ինչո՞ւ, որովհետեւ չպահեցին իրենց հաւատարմութիւնն ու ուխտը Աստուծոյ հետ: Այս երեւոյթը ոչ միայն Յուդային համար, այլ բոլոր անոնց որոնք այս ընթացքով կ'ընթանան: Զարմանալիօրէն այս հատուածը բառացի արձանագրուած կը գտնենք Բ Օրինաց 29 գլխուն մէջ: Ահա սկիզբէն Տերը պարտիրած էր այս ժողովուրդին ու փրուած էր պարգամը թէ ինչպէս պիտի ապրի խոստացուած երկրին մէջ: Ռեւէ մէկը չըսէ թէ չի գիտեր ինչպէս պիտի ապրի, չէ փրուած ռեւէ մէկ պարգամ կամ թելադրութիւնը: Ընդհակառակը, այսպէս կ'ըսէ Բ Օրինաց գիրքը. «**Ծածուկ բաները մեր Տէր Աստուծոյն կը վերաբերին, բայց յայտնուած բաները մեզի ու մեր որդիներուն փրուած են յաւիտեան, որպէսզի այս օրէնքին բոլոր խօսքերը կատարենք**» (Բ Օրինաց 29:29):

Յաջորդ թագաւորը փոխանակ ընդօրինակելու իր հօր նկարագիրը իրաւունք եւ արդարութիւն ընելու, որպէսզի իրեն համար աղէկ ըլլայ, ընդհակառակը աչքերն ու սիրտը ազահութեան, անմեղ արիւն թափելու, անիրաւութիւն եւ բռնութիւն ընելու (17 հմբ): Այո, թագաւորը կերաւ ու խմեց, բայց նաեւ իրաւունք ու արդարութիւն ըրաւ, աղքատին ու փնանկին դատը փեսաւ, անոր համար ալ իրեն աղէկ եղաւ, եւ այս իսկ է զԱստուած ճանչնալու ճամբան, ու մանաւանդ՝ անով Աստուծոյ նմանելու:

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԸ ՅՈՎԱԿԻՄԻ ՄԱՍԻՆ (22:18-19)

Յովակիմ որդին էր Յովսիա թագաւորին: Ան երբեք իր հօրը ճամբով չգալեց, ընդհակառակը Աստուծոյ առջեւ չարութիւն ըրաւ: Ահա այդ իսկ պարճառով Տիրոջ պարգամը կ'ըլլայ. «**Անոր վրայ պիտի չողբան**» (18 հմբ), ինչպէս ողբացին հօրը վրայ՝ Յովսիայի:

ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏԳԱՍԸ ԵՐԻՈՍԱԴԷՄԻ ՄԱՍԻՆ (22:20-23)

Տերը քանի քանի անգամներ խրապեց, որպէսզի Յովակիմ թագաւորը դարձի գայ, բայց ընդհակառակը երբեք մտիկ չըրաւ Աստուծոյ խօսքին: Թագաւորին հովիւները, հոմանիները բոլորն ալ գերութեան պիտի տարուին, ու ինք ողորմելի պիտի ըլլայ ու պիտի նախապտուի: Որքան զգուշ պէտք է ըլլալ երբ յաջողութիւն կ'արձանագրենք, որովհետեւ կը սկսինք խոտորիլ, եւ Աստուծոյ խօսքը մտիկ չընել, այդ բոլորը վերագրելով մեզի, մեր կարողութիւններուն, մեր ուժին, մեր գիտութեան: Մոռնալով Աստուծոյ ներկայութիւնը, ու մանաւանդ ականջ չտալով Անոր պատուիրաններուն: Այս իսկ պատճառով, թագաւորին կարծած օգնականներն ու խորհրդականները բոլորն ալ հովը պիտի քշէ: Այսպէղ հովը խորհրդանիշ է Աստուծոյ դատաստանին, եւ գերի պիտի տարուին: Եւ ահա դուն որ շքեղ պալատի մէջ կը բնակիս, նման Լիբանանի շքեղութեան, ողորմելի պիտի ըլլաս:

ՎԱՏՈՒԾՈՅ ՂԱՏԱՍԱՆԸ ՅԵՔՈՆԻԱՅԻՆ (22:24-30)

Տիրոջ խօսքը կ'ըլլայ Յովակիմի որդի Յեքոնիայի: Ինչպիսին ալ ըլլաս, թէկուզ Աստուծոյ աջ ձեռքին կնիք, զինք պիտի փրցնէ (24 հմր): Ուրեմն, որքան զգուշ պէտք է ըլլալ, եւ ոչ թէ հպարտանալ երբ Աստուծոյ աջ ձեռքին իբրեւ կնիք կը դրուինք, որովհետեւ եթէ երբեք հնազանդութեամբ չիտելինք Աստուծոյ պատուիրաններուն, Աստուած կը փրցնէ: Եւ ահա Տիրոջ պատգամը, որ այս թագաւորին սերունդէն ոեւէ մէկը յաջողութիւն պիտի չգտնէ, որ Դաւիթի աթոռին վրայ նստի եւ Յուդայի վրայ թագաւորութիւն ընէ (30 հմր):